Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 112-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 13
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 14
6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 16
7. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 29
8. Հետհսկողական գործընթաց - էջ 33
9. Առաջարկություններ - էջ 37

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի փետրվարի 10-ի թիվ 32-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 297–Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1330-Ն որոշում և այլն:
Հաշվեքննությունն	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի

ընդգրկող ժամանակաշրջանը	դեկտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի փետրվարի 15-ից մինչև ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132 –Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 2** – (1045-120034) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

4. **Ծրագիր 3** – (1075-11004) «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագիր:

5. **Ծրագիր 4** – (1111-12003) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

6. **Ծրագիր 5** – (1146-12003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» (Պարտադիր կրթության երրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում) ծրագիր:

7. **Ծրագիր 6** – (1168 - 11003) «Արվեստների ծրագիր» (Թատերական ներկայացումներ) ծրագիր:

8. **Ծրագիր 7** – (1168 - 11004) «Արվեստների ծրագիր» (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ) ծրագիր:

9. **Ծրագիր 8** – (1168 - 11001) «Արվեստների ծրագիր» (Օպերային և բալետային ներկայացումներ) ծրագիր:

10. **Ծրագիր 9** – (1192 - 32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/» ծրագիր:

11. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից Ծրագիր 9-ը** ներառյալ:

12. **ԱԱՀ –** Ավելացված արժեքի հարկ:

3. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2020թ. տարեկան պլանի և ճշտված պլանի միջև տարբերությունները կազմել են 2,435,572.8 հազ. դրամի, որոնք հիմնավորված են ՀՀ կառավարության որոշումներով և սահմանված կարգով՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ծանուցումներով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության 2020թ. ԾՐԱԳՐԵՐ-ի տարեկան պլանի և ճշտված պլանի տարբերությունների հիմնավորումների

(հազ. դրամ)

2020թ. տարեկան				
	Պլան	**Վերաբաշխում (+,-)**	**Ճշտված պլան**	**Հիմնավորումներ**
1	*2*	*3*	*4*	*5*
Ծրագիր 1				
1	**2,522,142.0**	**-200.000.0**	**2,322,142.0**	*ՀՀ կառավարության 08.12,2020 թ.* ***թիվ 1988 - Ն որոշում***
	Ընդամենը՝	*-200.000.0*		
Ծրագիր 2				
2	**8,479,558.8**	**-6,820.3**	**8,472,738.5**	*ՀՀ կառավարության 30.10,2020 թ.* ***թիվ 1750-Ն որոշում***
3	**8,472,738.5**	**-6,963.8**	**8,465,774.7**	*ՀՀ կառավարության 26.12,2019 թ.* ***թիվ 1919-Ն որոշում***
4	**8,465,774.7**	**-700.000.0**	**7,765,774.7**	*ՀՀ կառավարության 08.12,2020 թ.* ***թիվ 1988 - Ն որոշում***
	Ընդամենը՝	*-713,784.1*		
Ծրագիր 3				
5	**1,917,535.7**	**+25,034.8**	**1,942,570.5**	*ՀՀ կառավարության 09.04,2020 թ.* ***թիվ 528-Ն որոշում***
6	**1,942,570.5**	**+5,604.0**	**1,948,174.5**	*ՀՀ կառավարության 21.05,2020 թ.* ***թիվ 837-Ն որոշում***
7	**1,948,174.5**	**+7,239.4**	**1,955,413.9**	*ՀՀ կառավարության 18.06,2020 թ.* ***թիվ 980-Ն որոշում***
8	**1,955,413.9**	**+459,417.5**	**2,414,831.4**	*ՀՀ կառավարության 25.06,2020 թ.* ***թիվ 1075-Ն որոշում***
9	**2,414,831.4**	**+43,761.0**	**2,458,592.4**	*ՀՀ կառավարության 03.09,2020 թ.* ***թիվ 1437-Ն որոշում***
10	**2,458,592.4**	**+110,685.2**	**2,569,277.6**	*ՀՀ կառավարության 17.09,2020 թ.* ***թիվ 1539-Ն որոշում***
11	**2,569,277.6**	**+36,838.3**	**2,606,115.9**	*ՀՀ կառավարության 17.12,2020 թ.* ***թիվ 2048- Ն որոշում***
12	**2,606,115.9**	**+7,549.5**	**2,613,665.4**	*ՀՀ կառավարության 26.12,2019 թ.* ***թիվ 1919-Ն որոշում***
	Ընդամենը՝	+696,129.7		
Ծրագիր 4				
13	**10,057,160.9**	**-1,020,000.0**	**9,037,160.9**	*ՀՀ կառավարության 26.12,2019 թ.* ***թիվ 1919-Ն որոշում***
14	**9,037,160.9**	**-14,337.0**	**9,022,823.9**	*ՀՀ կառավարության 28.10,2019 թ.* ***թիվ 1736-Ն որոշում***
	Ընդամենը՝	*-1,034,337.0*		

1	2	3	4	5
		Ծրագիր 5		
16	**8,852,358.4**	**-114,592.5**	**8,829,765.9**	*ՀՀ կառավարության 17.12,2019 թ.* ***թիվ*** **2111-Ն** ***որոշում***
17	**8,829,765.9**	**-39,639.5**	**8,798,126.4**	**ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 11002/-36239-5 ծանուցում**
	Ընդամենը՝	*-154,232.0*		
		Ծրագիր 6		
18	**1,808,703.2**	**+7, 344.0**	**1,816,047.2**	*ՀՀ կառավարության 09.04,2020 թ.* ***թիվ*** **528-Ն** ***որոշում***
19	**1,816,047.2**	**+418,630.8**	**2,234,678.0**	*ՀՀ կառավարության 25.06,2020 թ.* ***թիվ*** **1075-Ն** ***որոշում***
20	**2,234,678.0**	**+26,166.0**	**2,260,844.0**	*ՀՀ կառավարության 03.09,2020 թ.* ***թիվ*** **1437-Ն** ***որոշում***
21	**2,260,844.0**	**+8,883.0**	**2,269,727.0**	*ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2020թ. թիվ 01/8-3/19002-2020 ծանուցում:*
22	**2,269,727.0**	**+1,260.0**	**2,270,987.0**	*Որոշում 8 և Նախարարության ՀՀ ֆինանսների նախարարության 11.12.2020թ. թիվ* ***01/17.3/30709-2020*** *գրություն:*
	Ընդամենը՝	*+462,283.8*		
		Ծրագիր 7		
23	**2,306,470.3**	**+24,261.9**	**2,330,732.2**	*ՀՀ կառավարության 26.12,2019 թ.* ***թիվ*** **1919-Ն** ***որոշում***
24	**2,330,732.2**	**+508,215.9**	**2,838,948.1**	*ՀՀ կառավարության 02.04,2020 թ.* ***թիվ*** **481-Ն** ***որոշում***
25	**2,838,948.1**	**-25,034. 8**	**2,813,913.3**	*ՀՀ կառավարության 09.04,2020 թ.* ***թիվ*** **528-Ն** ***որոշում***
26	**2,813,913.3**	**+9,000.0**	**2,822,913.3**	*ՀՀ կառավարության 11.06,2020 թ.* ***թիվ*** **941-Ն** ***որոշում***
27	**2,822,913.3**	**+445,118.1**	**3,268,031.4**	*ՀՀ կառավարության 25.06,2020 թ.* ***թիվ*** **1075-Ն** ***որոշում***
28	**3,268,031.4**	**+42,924.0**	**3,310,955.4**	*ՀՀ կառավարության 03.09,2020 թ.* ***թիվ*** **1437-Ն** ***որոշում***
29	**3,310,955.4**	**+3,283.4**	**3,314,238.8**	*ՀՀ կառավարության 17.12,2020 թ.* ***թիվ*** ***2048- Ն որոշում***
30	**3,314,238.8**	**+7,193.7**	**3,321,432.5**	*ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2020 թ. թիվ* ***01/8-3/19002-2020*** *ծանուցում*
	Ընդամենը՝	*+1,014,962.2*		
		Ծրագիր 8		
31	**1,460,827.7**	**+10, 125.0**	**1,470,952.7**	*ՀՀ կառավարության 21.05,2020 թ.* ***թիվ*** **837-Ն** ***որոշում***
32	**1,470,952.7**	**+1,394,966.5**	**2,865,919.2**	*ՀՀ կառավարության 25.06,2020 թ.* ***թիվ*** **1075-Ն** ***որոշում***
33	**2,865,919.2**	**+15,902.0**	**2,881,821.2**	*ՀՀ կառավարության 03.09,2020 թ.* ***թիվ*** **1437-Ն** ***որոշում***
34	**2,881,821.2**	**+66.765.1**	**2,528,212.7**	*ՀՀ կառավարության 17.12,2020 թ.* ***թիվ*** ***2048- Ն որոշում***
35	**2,528,212.7**	**+45,963.6**	**2,994,549.9**	*ՀՀ ֆինանսների նախարարության ծանուցում՝* ***01/8-3/19002-2020,20.12.2020 թ.***
	Ընդամենը՝	*+1,533,722.2*		
		Ծրագիր 9		
36	**3,087,195.1**	**+830,828.0**	**3,918,023.1**	*ՀՀ կառավարության 21.10.2020թ.* ***1709-Ն*** *որոշում*
	Ընդամենը՝	*+830,828.0*		
	Ամբողջը՝	**- 2,435,572.8**		

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ում (բացառությամբ՝ Ծրագիր 8-ի) 2020թ. տարեկան ճշտված պլանի և ֆինանսավորման միջև տարբերությունները կազմել են 3,524,745.8 հազ. դրամ: Թերֆինանսավորման պատճառները կապված են մի շարք հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	**Ծրագրեր**	2020 թ. տարեկան			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	*Թերֆինան-սավորում*	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	**Ծրագիր 1**	**2,322,142.0**	**2,282,913.2**	*39,228.8*	Տարբերությունը պայմանավորված է նպաստ ստացող նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության սովորողների փաստացի թվի նվազմամբ:
2	**Ծրագիր 2**	**7,765,774.7**	**7,668,942.6**	*96,832.1*	Տարբերությունը պայմանավորված է նպաստ ստացող միջին մասնագիտական կրթության ուսանողների փաստացի թվի նվազմամբ:
3	**Ծրագիր 3**	**2,613,665.4**	**2,585,708.0**	*27,957.4*	Տարբերությունը պայմանավորված է երկրում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով, ինչպես նաև՝ ԱԱՀ-ի գումարների վերադարձներով:
4	**Ծրագիր 4**	**9,022,823.9**	**8,873,308.1**	*149,515.8*	Տարբերությունը պայմանավորված է բուհերում նպաստ ստացող ուսանողների փաստացի թվով:
5	**Ծրագիր 5**	**8,798,126.4**	**8,781,556.6**	16,569.8	Տնտեսումը պայմանավորված է աշակերտների փաստացի թվով, ինչպես նաև 2020թ. ֆինանսավորման բանաձևի փոփոխությամբ (ուսուցիչների նվազագույն աշխատավարձ, կոմունալ ծախսերի փաստացի հաշվարկով):
6	**Ծրագիր 6**	**2,270,987.0**	**2,221,454.2**	*49,532.8*	Տարբերությունը պայմանավորված է «Խորեոգրաֆիայի թատրոն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագիր չկնքելու հանգամանքով և ԱԱՀ-ի գումարների վերադարձներով:
7	**Ծրագիր 7**	**3,321,432.5**	**3,312,484.7**	*8,947.8*	Թերֆինանսվորումը պայմանավորված է երկրում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով, ինչպես նաև՝ ԱԱՀ-ի գումարների վերադարձներով:

1	2	3	4	5	6
8	**Ծրագիր 8**	**2,994,549.9**	**2,994,549.9**	*0,0*	--
9	**Ծրագիր 9**	**3,918,023.1**	**781,861.9**	*3,136,161.2*	Թերֆինանսավորման բացատրությունը տրված է ստորև:
Ընդամենը՝		**43,027,524.9**	**39,502,779.2**	*3,524,745.8*	

Կոմիտեի Ծրագիր 9-ում 2020թ. տարեկան ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած 3,136,161.2 հազ. դրամ տարբերությունը ունի հետևյալ պարզաբանումը.

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված 781,861.9 հազ. դրամը բաշխված է միայն համաֆինանսավորման միջոցների մասով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի պլանը՝ ըստ վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի: Ցուցանիշների համադրելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է ֆինանսավորման մեջ ներառել նաև վարկային միջոցների ֆինանսավորման ցուցանիշը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 2,956,644.9 հազ. դրամ: Արդյունքում, ֆինանսավորման հանրագումարը երկու ֆինանսավորման միջոցներից 2020թ.-ի ընթացքում կազմել է ընդամենը 3,738,506.8 հազար ՀՀ դրամ (781,861.9+2,956,644.9): 2020թ-ի ճշտված պլանի և ֆինանսավորման իրական տարբերությունը կազմել է +179,516.3 հազար ՀՀ դրամ (3,918,023.1 - 3,738,506.8): Նշված տարբերությունը պայմանավորված է վարկային միջոցների ֆինանսավորման առանձնահատկությամբ, որը հատկացվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի վճարումների հիման վրա:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ից թվով 5-ում (Ծրագիր 2, Ծրագիր 3, Ծրագիր 6, Ծրագիր 7 և Ծրագիր 9) 2020թ. տարեկան ֆինանսավորման և դրամարկղային ծախսի միջև տարբերությունները ընդամենը կազմել են -2,900,637.7 հազ. դրամ, ընդ որում Ծրագիր 9-ում՝ - 3,127,447.7 հազ. դրամ, իսկ մնացած թվով 4 ծրագրերում՝ ընդամենը +226,810.0 հազ. դրամ: Պատճառները պայմանավորված են ներքոհիշյալ հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 5-ում ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերության պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ. տարեկան			Տարբերության պատճառները
		Ֆինան-սավորում	Դրամարկղային ծախս	*Տարբերություն (+, -)*	
1	**Ծրագիր 2**	**7,668,942.6**	**7,603,856.2**	*+ 65,086.4*	Պայմանավորված է ՊՈԱԿ-ների կողմից գումարների, այդ թվում՝ ԱԱՀ-ի գումարների վերադարձով:
2	**Ծրագիր 3**	**2,585,708.0**	**2,520,919.4**	*+ 64,788.6*	
3	**Ծրագիր 6**	**2,221,454.2**	**2187,235.7**	*+ 34,218.5*	
4	**Ծրագիր 7**	**3,312,484.7**	**3,249,768.2**	*+ 62,716.5*	
5	**Ծրագիր 9**	**781,861.9**	**3,909,309.6**	- 3,127,447.7	Տարբերության բացատրությունը տրված է ստորև:
Ընդամենը՝		**16,570,451.4**	**19,471,089.1**	**- 2,900,637.7**	

Ծրագիր 9-ում 2020թ. տարեկան ֆինանսավորման և դրամարկղային ծախսի 234,531.6 հազ. դրամի տարբերությունը հիմնականում պայմանավորված է ինչպես ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների նախատեսված ժամանակացույցերից որոշակի շեղմամբ, այնպես էլ լաբորատոր սարքավորումների ներմուծման համար նախապես հաշվարկված և փաստացի վճարված մաքսատուրքերի տարբերության չափով տնտեսմամբ:

Բացի այդ հաշվետու ժամանակաշրջանի բյուջեում նախատեսվում էր նաև դպրոցների համար համակարգչային սարքավորումների գնման նպատակով կնքված պայմանագրի շրջանակում կանխավճարի վճարում բանկային երաշխիքի դիմաց, սակայն մատակարար կազմակերպությունը նախընտրել է ամբողջական վճարումը ստանալ ապրանքները մատակարարելուց հետո: Դրամարկղային ծախսը գերազանցել է փաստացի ֆինանսավորման չափին նախորդ տարվա վարկային միջոցների առկա մնացորդի հաշվին:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2020թ. տարեկան դրամարկղային և փաստացի ծախսերի միջև ընդհանուր տարբերությունը կազմել է -127,444.4 հազ. դրամ, ընդ որում թվով 5 ծրագրերում (Ծրագիր 2, Ծրագիր 3, Ծրագիր 5, Ծրագիր 6 և Ծրագիր 7) դրամարկղային ծախսերը գերազանցել են փաստացի ծախսերին (ընդամենը՝ +433,214 .6 հազ. դրամ), իսկ մնացած՝ թվով 4 ծրագրերում (Ծրագիր 1, Ծրագիր 4, Ծրագիր 8 և Ծրագիր 9) փաստացի ծախսերն են գերազանցել դրամարկղային ծախսերին (ընդամենը՝ -560,658.9 հազ. դրամ):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2020թ. տարեկան փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի, նվազումների համամասնությունները պայմանավորված են՝

1. Դեբիտորական պարտքերի գծով՝ հիմնականում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, դրամական միջոցների մնացորդների և պահեստում ապրանքանյութական պաշարների առկայությամբ, արձակուրդային գումարների վճարներով, ինչպես նաև տարվա սկզբի դեբիտորական պարտքի մարմամբ և 2020թ. դեկտեմբեր ամսվա կոմունալ վճարներով:

2. Կրեդիտորական պարտքերի գծով հիմնականում 2020թ. դեկտեմբեր ամսվա հաշվարկված, բայց 2021թ. հունվարին վճարված կոմունալ ծախսերի, ինչպես նաև աշխատավարձերի, արձակուրդային վճարների և կրեդիտորական պարտքերի մարմամբ:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում (բացի Ծրագիր 9-ը) 2020թ. տարեկան դրամարկղային և փաստացի ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ. տարեկան						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբե-րություն (+, -)	Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 - Սյունակ 7 (+,
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	**Ծրագիր 2**	**7,603,856.2**	**7,403,702.2**	- 200,154.0	218,655.9	18,501.9	*200,154.0*	***0,0***
2	Ծրագիր 3	**2,520,919.4**	**2,441,327.0**	- 79,592.4	55,816.5	(-23,775.9)	79,592.4	*0,0*

1	2	3	4	5	6	7	8	9
3	Ծրագիր 5	**8,781,556.6**	**8,646,982.0**	- 134,571.7	141,983.8	17,337.7	124,,646.1	*-9,928.7*
4	Ծրագիր 6	**2,187,235.7**	**2,179,317.3**	- 7,918.4	793.8	(-7,124.6)	7,918.4	*0,0*
5	Ծրագիր 7	**3,249,768.2**	**3,238,793.1**	-10,975.1	9,566.1	(-1,409.0)	10,975.1	*0,0*
Ընդամենը՝		**24,343,336.1**	**23,910,121.6**	-433,214.6	426,816.1	(-3,530.1)	423,286.0	*-9,928.7*
6	**Ծրագիր 1**	**2,282,913.2**	**2,290,361.5**	+ 7,448.3	(-7,666.1)	(-217.8)	-7,448.3	*0,0*
7	**Ծրագիր 4**	**8,873,308.1**	**8,873,357.8**	*+ 49.7*	(-221.9)	(-136.0)	*-85.9*	*-36,2*
8	**Ծրագիր 8**	**2,994,549.9**	**2,998,282.7**	***+3,732.8***	(-3,732.8)	**0.0**	*-3,732.8*	***0.0***
9	**Ծրագիր 9**	**3,909,309.6**	**4,458,737.7**	**+549,428.2**	(-79,362.1)	30,519.3	*-109,881.4*	**+439,546.9**
Ընդամենը՝		**18,060,080.8**	**18,620,739.7**	**+560,658.9**	(-90,982.9)	30,165.5	-121,148.4	**+439,510.5**
Ամբողջը՝		**42,403,416.9**	**42,530,861.2**	*+127,444.4*	335,833.2	33,695.6	*+302,137.6*	**+429,582.0**

Նախարարության Ծրագիր 9-ում փաստացի և դրամարկղային ծախսերի միջև 549,428.2 հազ. դրամի տարբերությունը, ինչպես նաև՝ 2020թ. տարեկան դեբիտորական և կրեդիտորական պարտքերի 109,881.4 հազ. դրամի բացարձակ

տարբերությունը, որի հետևանքով ստացվում է +439,546.9 հազ. դրամի շեղում, պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

Դեբիտորական պարտքերի ավելացումը պայմանավորված է՝

1) Դեբիտորական պարտքերի (տարեսկիզբ և տարեվերջ) ցուցանիշները ներկայացվում են միայն համաֆինանսավորման մասով, ուստի ցուցանիշների համադրելիությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել նաև վարկային միջոցների ցուցանիշները, մասնավորապես, տարեսկզբին 471,509.5 հազար դրամ, տարեվերջին՝ 154,040.0 հազ. դրամ: Արդյունքում իրական տարբերությունը վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի մասով կկազմի ընդամենը 396,831.5 հազ. դրամ ((117,872.0+471,509.5)-(385,10.0+154,040.0)): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին դեբիտորական պարտքի նվազումը պայմանավորված է նախորդ ժամանակաշրջաններում տրված կանխավճարային գումարների կատարված աշխատանքներին համամասնորեն մարումներով:

2) Կրեդիտորական պարտքերի (տարեսկիզբ և տարեվերջ) ցուցանիշները ներկայացված են միայն համաֆինանսավորման մասով, ուստի ցուցանիշների համադրելիությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել նաև վարկային միջոցների ցուցանիշները, մասնավորապես՝ տարեսկզբին 45,973.0 հազ. դրամ, տարեվերջին՝ 168,050.4 հազ. դրամ: Արդյունքում իրական տարբերությունը վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի մասով կկազմի ընդամենը 152,596.7 հազ. դրամ ((11,493.3+45,973.0)-(42,012.6+168,050.4)):

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կրեդիտորական պարտքի ավելացումը պայմանավորված է.

1) Կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից շարունակվել է պահվել երաշխիքային գումար 5%-ի չափով մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը՝ 2021թ. սեպտեմբերի 30-ը;

2) Հաշվետու ժանամակաշրջանի ավարտին առկա են կատարված աշխատանքների դիմաց չվճարած գումարներ, որոնց վճարումներն իրականացվելու են հաջորդ ամսվա ընթացքում:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Վերը նշվածը, ինչպես նաև ՀՀ տարածքում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հանգամանքները, զգալի դժվարություններ են առաջացրել հաշվեքննությունն ըստ ծրագրերի և միջոցառումների կատարման ռիսկերի ամբողջական և համակողմանի գնահատման գործընթացում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները:

Նախարարության 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2020թ. տարեկան ընդհանուր պլանը կազմել է 29,577,853.8 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 32,695,043.1 հազ. դրամ, ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 30,054,283.1 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 32,244,246.4 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 31,469,862.5 հազ. դրամ:

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. տարեկան ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 5-ում, իսկ Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ . տարեկան ֆինանսական ցուցանիշները՝ աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020 թվականի տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	Տարեկան պլան	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում	Տարեկան ճշտված պլան	**2020 թ. տարեկան** փաստացի ֆինանսավորում	**2020 թ. տարեկան** դրամակղային ծախս	**2020 թ. տարեկան** փաստացի ծախս	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
Նախարարություն (104010)	**74,167,479.7**	*3,165,735.1*	**77,333,214.1**	**69,328,391.3**	**72,298,719.4**	**72,574,479.1**	*93,5*
Նախարարության Ծրագիր 1	**2,522,142.0**	**-200,000.0**	**2,322,142.0**	**2,282,913.2**	**2,282,913.2**	**2,290,361.5**	*98.3*
Նախարարության Ծրագիր 2	**8,479,558.8**	**-713,784.1**	**7,765,774.7**	**7,668,942.6**	**7,603,856.2**	**7,403,702.2**	*98.8*
Նախարարության Ծրագիր 3	**1,917,535.7**	**696,129.7**	**2,613,665.4**	**2,585,708.0**	**2,520,919.4**	**2,441,327.0**	*98.9*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*

Նախարարության Ծրագիր 4	10,057,160.9	-1,034,337.0	9,022,823.9	8,873,308.1	8,873,308.1	8,873,357.7	*98.3*
Նախարարության Ծրագիր 5	8,952,358.4	-154,232.0	8,798,126.4	8,781,556.6	8,781,556.6	8,646,981.9	*99.8*
Նախարարության Ծրագիր 6	1,808,703.2	462,283.8	2,270,987.0	2,221,454.2	2,187,235.7	2,179,317.3	*97.8*
Նախարարության Ծրագիր 7	2,306,470.3	1,014,962.2	3,321,432.5	3,312,484.7	3,249,768.2	3,238,793.1	*99.7*
Նախարարության Ծրագիր 8	1,460,827.7	1,533,722.2	2,994,549.9	2,994,549.9	2,994,549.9	2,998,282.7	*100.0*
Նախարարության Ծրագիր 9	3,087,195.1	830,828.0	3,918,023.1	781,861.9	3,909,309.6	4,458,737.8	*20.0*
Ընդամենը ԾՐԱԳՐԵՐ՝	**40,591,952.1**	**2,435,572.8**	**43,027,524.9**	**39,502,779.1**	**42,403,416.8**	**42,530,861.1**	*91.8*

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ի 2020թ. երեք ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր, որ.

6.1.1 Նախարարությունը Ֆեդերացիաների հետ դրամաշնորհային պայմանագրերը կնքել է առանց սահմանված կարգով պահանջվող մրցույթների: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման Հավելվածի 3-րդ գլխի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

6.1.2 Նախարարությունը Ֆեդերացիաներում չի իրականացրել սահմանված կարգով մոնիթորինգ և չի վերահսկել գնումների գործընթացը՝ համաձայն կնքված պայմանագրերի: Առկա է անհամապատասխանություն Նախարարության և Ֆեդերացիաների միջև կնքված պայմանգրերի 2.4.7 կետերի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

6.1.3 Նախարարության կողմից, գնանշման հարցմամբ թվով 1 մասնաբաժնով կատարված գնման ընթացքում «Pocurement.am» տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է երկու աշխատանքային օր ուշացումով: Առկա է անհամապատասխանություն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

6.1.4 Նախարարության կողմից, «Մեկ անձից գնում» ընթացակարգով 206,033.5 հազ. դրամի չափով գնումներ կատարելիս, գնման մասնակիցներին չեն ուղարկվել հրավերներ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվեն են բացատրություններ և պարզաբանումներ:

6.1.5 Նախարարության կողմից, «Մեկ անձից գնում» ընթացակարգով գնումներ կատարելիս, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները տեղեկագրում հրապարակվել են ավելի ուշ, քան կնքվել են պայմանագրերը: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվեն են բացատրություններ և պարզաբանումներ:

6.2 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ի 2020թ. վեց ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր, որ.

6.2.1 Նախարարության «Երևանի պետական զարդարվեստի արհեստագործական» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ուսումնարան) կողմից Տեղեկագրում չեն հրապարակվել գնման հրավերները, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները, կնքված պայմանագրի մասին որոշումները, ընտրված մասնակցի վերաբերյալ որևէ տեղեկատվություն: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

6.2.2 Նախարարության Ուսումնարանը կատարել է գնում ընդամենը թվով 12 չափաբաժիններով՝ 709.0 հազ. դրամ գումարի չափով: Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

6.2.3 Ուսումնարանը 2020թ-ի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չի հայտարարվել, պայմանագիր չի կնքել, շարունակել է օգտվել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայություններից՝ 2020թ. առաջին կիսամյակի ընթացքում վճարելով 75,6 հազ. դրամ գումար: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

6.2.4 Նախարարության ենթակայության թվով 108 ավագ դպրոցներից ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված 24-ից (2020թ-ի համար հաշվարկված տարեկան ընդհանուր ֆինանսավորումը 2,320,788.3 հազար դրամ) թվով 2-ում («Երևանի Գ. Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» և «Աշտարակի Ն. Սիսակյան անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ներ) ընդհանուր 1119 աշակերտների համար Նախարարության և ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվարկված տարեկան ֆինանսավորման ենթակա գումարները համընկնում են (246,528.4 հազար դրամ կամ 10,6%): Թվով 2 ավագ դպրոցների («ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ ավագ դպրոց» և «Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ-ներ) ընդհանուր 519 աշակերտների համար 2020թ-ի տարեկան ֆինանսավորման ենթակա գումարները ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվարկվել և կազմել են 135.683.6 հազ. դրամ, իսկ Նախարարությունը հաշվարկել է 125,738.5 հազ. դրամ (թերֆինսավորումը՝ 9,945,1 հազ. դրամ կամ 0,4 %): Դիտարկված թվով 24 ավագ դպրոցներից մնացած 20-ում (աշակերտների թիվը՝ 8007) Նախարարության կողմից 2020թ.-ի տարեկան ֆինանսավորման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1,947,521.4 հազ. դրամ, իսկ ՀՀ հաշվեքննիչ պալատի հաշվարկներով այն կազմում է 1,547,490.3 հազ. դրամ (տարբերությունը՝ 401,031.1 հազ. դրամ կամ 17,3 %), որոնք վերաբերում են ինչպես Երևան քաղաքի 3868 աշակերտներով թվով 7 (880,778,2 հազար դրամ կամ 45,4

%), այնպես էլ՝ ՀՀ մարզերի 4658 աշակերտներով թվով 15 ավագ դպրոցներին: Առկա են թվով 22 ավագ դպրոցների տարեկան ֆինանսավորման հաշվարկների հետ կապված անհամապատասխանություններ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշման դրույթների հետ:

6.3 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ի 2020թ. ինն ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր, որ.

6.3.1 Նախարարության ենթակայության «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի «Գնանշման հարցում» ընթացակարգով կատարված գնման ընթացքում Տեղեկագրում չի հրապարակվել հայտերի գրանցման գրանցամատյանի բնօրինակից արտատպված տարբերակը և շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված տարբերակը: Առկա է անհամապատասխանություն Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

6.3.2 Նախարարության ենթակայության «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ը «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում բացի պայմանագիր կնքելու որոշման մասին և կնքված պայմանագրի մասին հայտարարություններից, այլ տեղեկություններ չեն հրապարակվել Տեղեկագրում: Առկա է անհամապատասխանություն Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2–րդ ենթակետի պահանջների հետ:

6.3.3 Նախարարության ենթակայության «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ը 2020թ-ի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չեն հայտարարվել, շարունակել են օգտվել ծառայություններից նախորդ տարիներին կնքված պայմանագրերի հիման վրա: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Գ» ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

6.3.4 Նախարարության ենթակայության «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում բացի պայմանագիր կնքելու որոշման մասին և կնքված պայմանագրի մասին հայտարարություններից, այլ տեղեկություններ չեն հրապարակվել Տեղեկագրում: Առկա է անհամապատասխանություն Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

6.3.5 Նախարարության ենթակայության «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ում բացակայում են գնման նպատակով կատարված

գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

6.3.6 Նախարարության ենթակայության «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ում բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

6.3.7 Նախարարության ենթակայության «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը 2020թ-ի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չեն հայտարարվել, շարունակել են օգտվել ծառայություններից նախորդ տարիներին կնքված պայմանագրերով: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Գ» ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտը սույն ընթացիկ եզրակացության թիվ 6.2.2–ից թիվ 6.3.7 անհամապատասխանությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ և պարզաբանումներ:

6.3.8 Նախարարությունը ուսանողական նպաստ տրամադրելու մասին Ծրագիր 1-ի թվով 53 (ընդհանուր 2,040,240.0 հազ. դրամ) և Ծրագիր 2-ի թվով 79 (ընդհանուր տարեկան 7,293,211.1 հազ. դրամ) ՊՈԱԿ-ների հետ 2020թ. կնքված տարեկան պայմանագրերի (վերաբաշխումների) 2.1 կետերով նախատեսված ֆինանսավորման ենթակա ուսանողական նպաստների գումարաչափերի (ուսման վարձերի փոխհատուցում) հաշվարկման մոտեցումները և մեխանիզմները, կիրառվող բանաձևերը, օգտագործված գործակիցները և ստացվող ֆինանսավորումները որևէ իրավական ակտերով հիմնավորված և կանոնակարգված չեն: Առկա են անհամապատասխանություններ Նախարարության և նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մանսագիտական կրթության ՊՈԱԿ ների հետ կնքված «Ուսանողական նպաստների տրամադրման մասին» պայմանագրերի թիվ 2.1 կետերի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տվել է պարզաբանում, ըստ որի «Նախարարությունն առաջնորդվել է միջնաժամկետ ծախսային ծրագրի բանաձևերով»:

Հաշվեքննողների կարծիքով օբյեկտի կողմից տրված բացատրությունը չի համապատասխանում «Բյուջետային համակարգի մասին» և «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներով տարեկան ֆինանսավորումներին վերաբերող պահանջներին:

6.4 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ի 2020թ. տարեկան (չորրորդ եռամսյակ) հաշվեքննությամբ պարզվեց, որ.

6.4.1 Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021թ. մարտի 26-ի թիվ 01/17.2/5842-21 գրության Նախարարությունը Ծրագիր 1-ի, Ծրագիր 2-ի և Ծրագիր 4-ի ուսումնական հաստատությունների ուսանողական նպաստ ստացող սովորողների (ուսանողների) վերաբերյալ տեղեկատվական նոր համակարգը ներդնելու է 2021թ. տարեսկզբից և ավարտելու է 2022թ. տարեվերջում: ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրումը՝ սահմանված ժամկետներում, ճշգրիտ և տվյալների իրավասության տեսակետից արժանահավատ, անկախ առաջարկվող ձևատեսքերի և ֆորմատների բարդության, դառնում է անհնարին:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տվել է բացատրություն՝ «Նախարարության կողմից հարցում էր կատարվել Հաշվեքննիչ պալատի նախագահին՝ հստակ նշելու ուսումնական հատատությունների անվանումները և առկա բացթողումները, նրանք շտկելու համար, ինչպես նաև տեղեկացրել է որոշ ուսանողների անհատական տվյալների (սոցիալական քարտ) բացակայության հիմնավորումը: Հաշվեքննիչ պալատի կողմից պատասխան գրություն չի ստացվել»:

Հաշվեքննողները ներկայացված բացատրությունը չեն ընդունել: Ընթացիկ եզրակացություններում առկա անհամապատասխանությունների և այլ փաստերի վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին հաշվեքննության օբյեկտի գրությանը ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից արձագանք չի նախատեսված: Ծրագիր 1-ի, Ծրագիր 2-ի և Ծրագիր 4-ի գծով Նախարարության կողմից հավաքագրված նպաստառու սովորողների և ուսանողների ընդհանուր ցանկերից կազմված շտեմարաններում առկա են թերի, անձնական տվյալների սխալներով, կրկնվող տողերով և անհատականացման չափորոշիչների շեղումներով տվյալներ, որոնցով հաշվեքննության ընթացակարգերը կիրառելի չեն և գործառույթները չեն արտահայտում իրական պատկերը: Նշված պատճառներով ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունը, այդ թվում՝ վերլուծական ընթացակարգերը, համադրությունները, վերակատարումները և հաշվեքննության այլ

գործառույթները տարածվել են բացառապես Ծրագիր 1-ի, Ծրագիր 2-ի և Ծրագիր 3-ի ֆինանսական և ոչ ֆինանսական ամփոփ ցուցանիշների մասով:

6.4.2 Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման և ամփոփման ընդհանուր պայմանները հրամանը հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի թիվ 324-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 254-Ն հրամանով սահմանված կարգով Նախարարության կողմից Ծրագիր 1-ի, Ծրագիր 2-ի և Ծրագիր 4-ի գծով ներկայացված հաշվետվությունների ամփոփագրերի սինթետիկ մակարդակի տեղեկատվության և Նախարարության կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացված անալիտիկ մակարդակի տեղեկատվության ամփոփագրերի միջև առկա են ընդամենագրերի անհամապատասխանություններ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

6.4.3 Նախարարության 2020թ. Ծրագիր 5-ի դրամարկղային և փաստացի ծախսերի 134,574.7 հազ. դրամի տարբերությունը չի համընկնում հաշվետու ժամանակաշրջանի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոխադարձ հաշվարկի հետ և առաջացնում է 9,928.6 հազ. դրամի հաշվարկային շեղում, որը չի համապատասխանում գործող բյուջետային և իրավական կարգավորումների հետ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել է բացատրություն, ըստ որի «... 9,928.6 հազ. դրամի հաշվարկային շեղման վերաբերյալ հայտնում ենք, որ Նախարարության ենթակայության 11 ավագ դպրոցներում կատարվել է դեբիտորական պարտքերի ճշգրտում, քանի որ որոշ կազմակերպություններ դեբիտորական պարտքերի մեջ ներառել էին նաև արտաբյուջեի դեբիտորական պարտքերը: Ստուգման արդյունքում կատարվել է դեբիտորական պարտքերի ճշգրտում»:

6.4.4 Նախարարության Ծրագիր 5-ի 2019թ. պարտադիր կրթության երրորդ մակարդակում միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների փաստացի թիվը ըստ ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանի (Հավելված 11.1) համապատասխան սյունակի կազմել է 20271 աշակերտ, իսկ 2020թ. պարտադիր կրթության երրորդ մակարդակում միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը՝ հունվարին պլանավորվել է 31374, որը ճշգրտվել է և կազմել 30536 աշակերտ, իսկ փաստացին՝ 36355: Հաշվեքննությամբ պարզվել է,

որ ըստ հաշվեքննության օբյեկտի կողմից տրամադրված 2020թ. հունվարի և սեպտեմբերի դասարանների և աշակերտների կոմպլեկտավորումների (այսուհետ՝ Կոմպլեկտավորում) տվյալների Ծրագիր 5-ի աշակերտների տարեսկզբի փաստացի թիվը 2020թ. հունվարին կազմել է 29645 աշակերտ: Տարբերությունը կազմում է 891 աշակերտ (30536 - 29645): Ըստ Կոմպլեկտավորման 2020թ. սեպտեմբերի փաստացի թիվը կազմել է 29753 աշակերտ, տարեկան աշակերտների միջին թիվը կկազմի 29681 ([(29645 X 2) + 29753] /3): Հաշվեքննիչ պալատին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Նախարարությունը 2020թ. հունվարի փաստացի թիվը ներկայացրել է 36215 սովորող, իսկ սեպտեմբերի փաստացի թիվը՝ 36644 սովորող, տարեկան աշակերտների միջին թիվը՝ 36358 ([(3625 X 2) + 36644] /3): 2019թ. աշակերտների փաստացի թվի (20271) և 2020թ. աշակերտների փաստացի թվի (36358) տարբերությունը կազմել է 16087 աշակերտ: Նշված տարբերությունները պարունակում են հնարավոր ռիսկեր և կարող են ազդել տարեկան ֆինանսավորումների վրա:

Հաշվեքննության օբյեկտը առարկել է, ներկայացնելով՝ «Ոչ ֆինանսական արդյունքների վերաբերյալ հայտնում եմ, որ Ձեր կողմից նշված ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանում (Հավելված 11.1-ում) 2019 թվականի 20271 աշակերտը միայն միջնակարգ մակարդակի երեխաների թիվ է, իսկ 36355-ը 2020 թվականի կոպլեկտավորման արդյունքում տարրական, հիմնական և միջնակարգ ուսուցման մակարդակներում ընդգրկված երեխաների թիվը, այսինքն երեք մակարդակների հանրագումարի համեմատությունը մեկ մակարդակի երեխաների թվի հետ առնվազն անընդունելի է:»

Հաշվեքննողներն առարկությունը չեն ընդունում, քանի որ հաշվեքննության ընթացքում հիմք է ընդունվել Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն 2019թ. ներկայացված հաշվետվության (Հավելված 11.1-ում) աղյուսակի համապատասխան տողի և սյունակի փաստացի թիվը համեմատվել է 2020թ. նույն հաշվետվության նույն տողի և նույն սյունակի փաստացի թվի հետ:

6.4.5 Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Նախարարության կողմից ներկայացված թվով 111 դպրոցներից երկուսը՝ «Երևանի թիվ 57 հիմնական դպրոց» և «Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 դպրոց» ՊՈԱԿ-ները ավագ դպրոցի մակարդակներ չունեն, սակայն աշակերտների թվով և զրոյական ֆինանսավորմամբ ներառվել են Ծրագիր 5-ում: Հաշվեքննությունը տարածվել է մնացած թվով 109 դպրոցների համար:

Հաշվեքննության օբյեկտը առարկել է՝ ներկայացնելով. «Երևանի թիվ 57 և Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոցները ներկայացված են եղել ֆինանսավորման հաշվարկներում, սակայն ավագ մակարդակի համար հաշվարկ կատարված չէ, և այն հաշվեքննության առարկա լինել չի կարող:»

Հաշվեքննողներն առարկությունը չեն ընդունում, քանի որ անիմաստ է առարկությունն այն դեպքում, երբ հաշվեքննության ժամանակ հիշյալ դպրոցները, ինչպես արձանագրվել է, հաշվեքննության ընթացքում ներառված չեն եղել (111 – 109 =2):

6.4.6 Նախարարության Ծրագիր 5-ի թվով 2 դպրոցների՝ «Աշտարակի Ն. Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» և «Երևանի Գ.Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ների, 1119 աշակերտների համար Նախարարության կողմից 2020թ. տարեկան ֆինանսավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվություններում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Երևանի Գ.Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նախնական (ըստ թվով 24 դպրոցների համար ներկայացված) տրամադրված տեղեկատվության մեջ ներկայացվել է 156,894.3 հազ. դրամ, իսկ հետագայում ամփոփ (ըստ թվով 111 դպրոցների համար ներկայացված) տրամադրված տեղեկատվությամբ՝ 188,273.2 հազ. դրամ: Հաշվեքննիչ պալատի կողմից կատարված հաշվարկներով այն պետք է կազմեր՝ 120,158.3 հազ. դրամ, տարբերությունները համապատասխանաբար՝ 36,736.0 հազ. դրամի և 68,114.9 հազ. դրամի: Ինչ վերաբերում է «Աշտարակի Ն. Սիսակյան անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին, ապա նախնական (ըստ թվով 24 դպրոցների համար ներկայացված) տրամադրված տեղեկատվությամբ ներկայացվել է 89,634.1 հազ. դրամ, իսկ հետագայում ամփոփ (թվով 111 դպրոցների համար) տրամադրված տեղեկատվությամբ՝ 107,560.9 հազ. դրամ: Հաշվեքննիչ պալատի կողմից կատարված հաշվարկներով այն պետք է կազմեր 71,691.3 հազ. դրամ, տարբերությունները համապատասխանաբար՝ 17,942.8 հազ. դրամի և 35,869.6 հազ. դրամի:

Հաշվեքննության օբյեկտն առարկել է, ներկայացնելով՝ «Ինչ վերաբերում է «Աշտարակի Ն. Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» և «Երևանի Գ.Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությանը, ապա նախնական ներկայացված տվյալներով հաշվի առնված չէ 2020 թվականի սեպտեմբերի ընդունելությունը, իսկ սեպտեմբերի երեխաների ընդունելությունից հետո ֆինանսավորումը բնականաբար պետք է փոխվեր:»

Հաշվեքննողներն առարկությունը չեն ընդունում, քանի որ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման նշված դպրոցների ֆինանսական հաշվարկների տարբերությունները վերաբերում են բացառապես 2020թ. հունվարին կատարված տարեկան հաշվարկներին՝ ըստ Նախարարության տրամադրված երկու տարբեր տեղեկատվությունների: Հաշվեքննողները ինչպես 2020թ. հունվարի, այնպես էլ՝ սեպտեմբերի հաշվարկները իրականացրել է համաձայն ՀՀ կառավարության 2006թ.

օգոստոսի 24-ի թիվ 1262–Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում – Բանաձև) սահմանված բանաձևի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020թ. հունվարի 31-ի թիվ 73-Ա/2 հրամանով (այսուհետ՝ Հրաման) սահմանված գործակիցների:

6.4.7 Ծրագիր 5-ի թվով 79 դպրոցներում 22947 աշակերտների համար Նախարարության հաշվարկներով 2020թ. տարեկան ֆինանսավորումը կազմել է 6,713,100. 0 հազ. դրամ, իսկ Հաշվեքննիչ պալատի հաշվարկներով՝ 4,625,235. 6 հազ. դրամ, տարբերությունը կազմել է 2,087,865.0 հազ. դրամ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ Նախարարությունը նշված դպրոցների ֆինանսական հաշվարկներն իրականացրել է Որոշում-Բանաձևում և Հրամանով սահմանված գործակիցների սխալ կիրառմամբ, այն է՝ **Սգ 2**-ում՝ 1,2 և 1,6653 գործակիցները կիրառվել են համատեղ, ինչպես նաև՝ բացակայում է ««Ավագ դպրոցներ» և «Առանձին գործող ավագ դպրոցներ» մակարդակների հասկացությունների հստակ սահմանումը:

6.4.8 Նախարարության Ծրագիր 5-ի թվով 22 դպրոցներում թվով 5880 աշակերտների համար Նախարարության կողմից 2020թ. ֆինանսավորումը կազմել է 1,763,480.3 հազ. դրամ, իսկ Հաշվեքննիչ պալատի հաշվարկներով պետք է կազմեր 1,368,807.6 հազ. դրամ և տարբերությունը կազմել է 394,672.7 հազ. դրամ:

6.4.9 «Արտաշատի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական հաշվարկներում հաշվեքննության օբյեկտը հաշվարկել է տարեկան ֆինանսավորման գումարը 84,730.7 հազ. դրամ, Հաշվեքննիչ պալատի հաշվարկներով այն պետք է կազմեր 52,053.2 հազ. դրամ, տարբերությունը՝ 32,677.5 հազ. դրամ: Հաշվեքննությամբ պարզվեց, որ Նախարարությունը «Արտաշատի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսավորման հաշվարկներում լրացուցիչ կիրառել է նաև բարձրլեռնային բնակավայրերի համար սահմանված գործակիցը՝ 1,074:

6.4.10 Նախարարության Ծրագիր 5-ի թվով 8 դպրոցների 709 աշակերտների համար Նախարարության կողմից 2020թ. տարեկան ֆինանսավորումը կազմել է 203,817.2 հազ. դրամ, իսկ Հաշվեքննիչ պալատի հաշվարկներով պետք է կազմեր 242,065.2 հազ. դրամ, թերֆինանսավորումները կազմել են 38,248.0 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտը սույն ընթացիկ եզրակացության թիվ 6.4.7-ից թիվ 6.4.10 անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացրել է առարկություն, ըստ որի «ՀՀ Հաշվեքննիչ պալատի հաշվարկման մեթոդաբանությունը պարզաբանումների կարիք ունի»

Հաշվեքննողներն առարկությունը չեն ընդունում, քանի որ դպրոցների ֆինանսական հաշվարկներն ըստ աշակերտների թվի ֆինանսավորման իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1262–Ն

որոշմամբ (այսուհետ՝ Որոշում – Բանաձև) սահմանված բանաձևի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020թ. հունվարի 31-ի թիվ 73-Ա/2 հրամանով (այսուհետ՝ Հրաման) սահմանված գործակիցների:

6.4.11 Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Նախարարության ենթակայության թվով 2՝ «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ 1) և «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ 2) կողմից 2020թ. ընթացքում իրականացված գնումների գործընթացները: ՊՈԱԿ 1-ի 2020թ. ընթացքում իրականացված «Գնանշման հարցում» ընթացակարգով 24 չափաբաժիններով՝ 27,913.7 հազ. դրամ գումարի չափով և «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով 143 չափաբաժիններով՝ 8,564.5 հազ. դրամ գումարի չափով կատարված գնումների գործընթացների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

6.4.11.1 Գնումների պլանում ընդգրկված, գնումների միասնական անվանացանկով սահմանված թվով 32 միջանցիկ ծածկագրեր չեն լրացվել չորրորդ մակարդակին համապատասխան: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում 1) հավելված 3-ի 2-րդ բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

6.4.11.2 «Գնանշման հարցում» ընթացակարգով ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/08, ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-20/02, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/05, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/06 ծածկագրերով կատարված գնման ընթացքում Տեղեկագրում չի հրապարակվել «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունները: Առկա է անհամապատասխանություն ՝ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.11.3 «Գնանշման հարցում» ընթացակարգով ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/09, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/01, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրերով կատարված գնման ընթացքում Տեղեկագրում «Կնքված պայմանագրի մասին» հայտարարություններն հրապարակվել են ուշացումով: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.11.4 «Գնանշման հարցում» ընթացակարգով ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/04, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/01, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/02, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-20/09 ծածկագրերով կատարված գնման ընթացքում «Պայմանագիր կնքելու որոշման մասին» հայտարարությունները Տեղեկագրում հրապարակվել են ուշացումներով: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.11.5 Բացակայում են «Մեկ անձից գնում» ընթացակարգով գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը՝ մասնավորապես մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

6.4.11.6 «Մեկ անձից գնում» ընթացակարգով ՕԲԹ-ՄԱԾՁԲ-20/03, ՕԲԹ-ՄԱԱՊՁԲ-20/02, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-20/02 ծածկագրերով կատարված գնման ընթացքում Տեղեկագրում «Կնքված պայմանագրի մասին» հայտարարություններն հրապարակվել են ուշացումով: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.11.7 «Մեկ անձից գնում» ընթացակարգով ՕԲԹ-ՄԱԾՁԲ-20/07 ծածկագրով կատարված գնման ընթացքում «կնքված պայմանագրի մասին» հայտարարությունը չի հրապարակվել Տեղեկագրում: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.11.8 «Մեկ անձից գնում» ընթացակարգով ՕԲԹ-ՄԱԱՊՁԲ-20/02, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-20/06 ծածկագրերով կատարված գնման ընթացքում «Պայմանագիր կնքելու որոշման մասին» հայտարարությունները Տեղեկագրում հրապարակվել են ուշացումներով: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.11.9 «Մեկ անձից գնում» ընթացակարգով ՕԲԹ-ՄԱԱՊՁԲ-20/03 ծածկագրով կատարված գնման ընթացքում «Պայմանագիր կնքելու որոշման մասին» հայտարարությունը չի հրապարակվել Տեղեկագրում: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.11.10 Համաձայն 2019թ. դեկտեմբերի 25-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 586 պայմանագրի ՊՈԱԿ 1-ը կատարել է գնում 2019թ. ամանորյա տոնական համերգի կազմակերպման համար՝ 48,000.0 հազ. դրամ ընդհանուր գումարով: «Պետության կարիքների համար ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայության մատուցման պետական գնման» թիվ ՕԲԹ-ՄԱԾՁԲ-19/20 պայմանագրով ՊՈԱԿ 1-ը «Մեկ անձից գնում» ընթացակարգով «Մեցցո Պրոդաքշն» ՍՊԸ-ից կատարել է գնում 34,200.0 հազ. դրամ գումարի չափով, կազմվել է ընդունման-հանձնման արձանագրություն, սակայն վճարվել է 31,031.7 հազ. դրամ (տարբերությունը՝ 3,168.3 հազ. դրամ): Թիվ ՕԲԹ-ՄԱԾՁԲ-19/19 պայմանագրով ՊՈԱԿ 1-ը «Մեկ անձից գնում» ընթացակարգով «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ից կատարել է գնում 12,000.0 հազ. դրամ գումարի չափով, կազմվել է ընդունման-հանձնման արձանագրություն, սակայն վճարվել է 12,000.0 հազ.

դրամ (տարբերությունը՝ 1,000.0 հազ. դրամ): Միջոցառման կազմակերպման շրջանակներում ՊՈԱԿ 1-ը տարածքը վարձակալել է իրենից՝ 1,800.0 հազ. դրամով: Վճարումները ՊՈԱԿ 1-ը կատարել է 2020թ.առաջին եռամսյակում, ինչպես նաև՝ 4,150.0 հազ. դրամի խնայողությունը 900005570115 գանձապետական հաշվին վերադարձվել է 2020թ. հուլիսի 7-ին: Հիշատակված գնման գործընթացներում կնքված պայմանագրերի, ստորագրված հանձնման-ընդունման արձանագրություններով սահմանված գումարաչափերի և ընդհանուր չվճարված գումարերի միջև առկա է 4,168.3 հազ. դրամի տարբերություն:

6.4.12 ՊՈԱԿ 2-ի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված «Գնանշման հարցում» ընթացակարգով մեկ չափաբաժնով 5,400.0 հազ. դրամ գումարի չափով և «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով 41 չափաբաժիններով 13,664.7 հազ. դրամ գումարի չափով կատարված գնումների գործընթացների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

6.4.12.1 2020թ. գնումների պլանը Տեղեկագրում հրապարակվել է ուշացումով՝ 2020թ. մարտի 10-ին, իսկ գնումը կատարվել է փետրվար ամսիին՝ 3,150.1 հազ. դրամ գումարի չափով: Առկա են անհամապատասխանություններ Որոշմում 12-ի հավելված 3-ի 3-րդ բաժնի 4-րդ կետի, Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Որոշում 13-ի 4-րդ բաժնի 16-րդ, 17-րդ կետերի պահանջների հետ:

6.4.12.2 «Գնանշման հարցում» ընթացակարգով ՀՊՍՆ-ԳՀԾՁԲ-20/01 ծածկագրով կատարված գնման ընթացքում Տեղեկագրում չի հրապարակվել «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունը: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.4.12.3 Բացակայում են «Մեկ անձից գնում» ընթացակարգով գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշում 13-ի 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

6.4.12.4 Տեղեկագրում չի հրապարակվել «Մեկ անձից գնում» ընթացակարգով կատարված գնումների վերաբերյալ որևէ տեղեկատվություն, մասնավորապես՝ «Պայմանագիր կնքելու որոշման մասին» և «Կնքված պայմանագրի մասին» հայտարարություններ: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել են հանգամանքներ, ըստ որոնց՝

- Գնման գործընթացի համար գործող իրավակարգավորումներով պատասխանատու է հանդիսանում սահմանված պատվիրատուի ղեկավարը:

- Նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական ստորաբաժանումների, այլ կառույցների առկա ռեսուրսներով շուրջ 350 օբյեկտների գնման գործընթացների ամբողջ ծավալով հսկողություն իրականացնելը անիրատեսական է:
- 2021թ.-ից Նախարարության կողմից արտաքին աուդիտորական ծառայությունների մատուցման շրջանակներում կներառվի նաև օբյեկտների գնումների ընթացակարգերը:

Հաշվեքննողները ներկայացված առարկությունը չեն ընդունում, քանի որ Նախարարությունը իր ենթակայության կազմակերպությունների գնումների ամբողջական գործընթացները գործող իրավակարգավորումների շրջանակներում պարտավոր է իրականացնել սահմանված վերահսկողությունը:

6.5 Հաշվեքննությամբ պարզվեց, որ «Դասագրքերի, դասամատյանների իրացումից մուտքեր» ուղղությամբ Նախարարության կողմից թվով 29 կառույցների անալիտիկ բացվածքի ամփոփագրի գումարը կազմել է 388.5 հազ. դրամ, սակայն հաշվետվությամբ (Ձև Հ-1) և ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանում սինթետիկ ընդամենագրերը կազմում են 490.6 հազ. դրամ, ուստի առկա է անհամապատասխանություն 102.1 հազ. դրամ գումարով:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. երեք ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր որ.

7.1.1 Նախարարության (08010101) «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագրով ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև առկա է տարբերություն՝ 39,804.8 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել է ի գիտություն, 39,804.8 հազ. դրամը կապված է կորոնավիրուսի համավարակով պայմանավորված միջազգային ֆեդերացիաների կողմից միջոցառումների դադարեցման հետ:

7.1.2 Թվով 4 Ֆեդերացիաներ միջոցառումների տնտեսումից առաջացած 40,074,6 հազ. դրամը ձևակերպել են բանկային հաշիվներում, իսկ թվով երկուսը՝ 5,526,7 հազար դրամ՝ կանխիկ դրամարկղում:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել է ի գիտություն:

7.1.3 2020թ. առաջին եռամսյակի ԾՐԱԳՐԵՐ–ի արդյունքային ցուցանիշների կատարողականը զգալիորեն ցածր է:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել է ի գիտություն, դրանք պայմանավորելով համավարակով:

7.1.4 2020 թվականի առաջին եռամսյակի ԾՐԱԳՐԵՐ–ի փաստացի ծախսը գերազանցում է դրամարկղային ծախսին (ֆինանսավորմանը)՝ ձևավորված դեբիտորների և կրեդիտորների հետ հաշվարկների գծով առաջացած պարտքերի ընդհանուր հանրագումարով:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել է ի գիտություն:

7.1.5 Նախարարությունը Ծրագիր 10-ում առկա է 113,796.5 հազ. դրամի թերակատարում:

Հաշվեքննության օբյեկտն ընդունվել է ի գիտություն և այն պայմանավորվել է որոշ լաբորատոր սարքավորումների մաքսատուրքերի ներմուծման համար նախապես հաշվարկված և փաստացի վճարված գումարների տնտեսմամբ:

7.1.6 2020 թվականի առաջին եռամսյակում Նախարարության Բարձրագույն որակավորման կոմիտեի աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովման 1.674,0 հազ. դրամը չի փոխանցվել:

Հաշվեքննության օբյեկտն ընդունվել է ի գիտություն և այն պայմանավորվել է հաստիքացուցակների ճշգրտումով, իսկ սոցիալական փաթեթով ապահովման գումարը փոխանցվել է 2020 թ. ապրիլ ամսին:

7.1.7 2020 թվականի առաջին եռամսյակում ֆինանսավորումը պակաս է 9,104. 2 հազ. դրամով:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել է ի գիտություն և այն պայմանավորել է «Խորեոգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ Նախարարության դրամաշնորհային պայմանագրի չկնքման հետ:

7.2 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. վեց ամիսների հաշվեքննությամբ պարզվել է որ ԾՐԱԳՐԵՐ-ում արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների գծով արձանագրվել են նվազումներ:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել է ի գիտություն և այն պայմանավորել է երկրում արտակարգ դրության հայտարարման հետ:

7.3 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. ինն ամիսների հաշվեքննությամբ պարզվել է, որ.

7.3.1 ԾՐԱԳՐԵՐ-ում արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների գծով արձանագրվում են նվազումներ:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել էր ի գիտություն և այն պայմանավորել երկրում արտակարգ և ռազմական դրության հայտարարման հետ:

7.3.2 ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. հունվարի 8-ի թիվ ՀՊԵ Ա Բ 159 գրությամբ հաշվեքննության օբյեկտին ուղղված հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը պահանջվել է, սակայն Նախարարության 2021թ. հունվարի 21-ի թիվ 01/17.2/843-21 և փետրվարի 1-ի թիվ 01/10.1/1360-21 գրություններով ստացված նյութերում առկա են չտրամադրման, ժամկետների խախտման, ոչ ամբողջական, թերի կամ ձևաչափերին ոչ համապատասխան դեպքեր:

Հաշվեքննության օբյեկտն առարկել է, ներկայացնելով՝ «Պահանջվող տեղեկատվությունը էլեկտրոնային կրիչով «Հանրակրթություն» թղթապանակի մեջ ներկայացվել է խմբի ղեկավարին»

Հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է ներկայացված տեղեկատվությունը, 2020թ. փետրվարի 2-ին կազմվել է Նախարարությունից ստացված տեղեկատվության տրամադրման նյութերի վերաբերյալ արձանագրություն, ըստ որի Նախարարությունը չի ներկայացրել (1111-12004) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» և (1146-11003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» ծրագրերով պահանջվող տեղեկատվությունը:

7.3.3 Դպրոցի կողմից «Մեկ անձ» գնման ընթացակարգով կատարված գնումների վերաբերյալ հաշվեքննությամբ պահանջվող և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին չի տրամադրվել:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են միայն պարզաբանումներ և բացատրություններ:

7.3.4 Նախարարության գլխավոր քարտուղարի 2021թ. փետրվարի 15-ի թիվ 04/13/2461-21 գրությամբ ներկայացվել է «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախում» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի փետրվարի 6-ի թիվ 20/21 գրությունը, ըստ որի «Նվագախմբի աշխատակիցների անձնական տվյալների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին օրենքով թույլատրելի չէ, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները»:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից պարզաբանումը չի ընդունվում:

2021 թվականի փետրվարի 15-ի թիվ 04/13/2461-21 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախում» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի փետրվարի 6-ի թիվ 20/21 գրության համաձայն՝ նվագախմբի աշխատակիցների անձնական տվյալների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին օրենքով թույլատրելի չէ, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածը կարգավորում է անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցելու հետ կապված հարաբերությունները, որը տվյալ դեպքում կիրառելի չէ: Հիմնավորումները գրավոր ներկայացվել են Նախարարություն:

7.4 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. տարեկան (չորրորդ եռամսյակ) հաշվեքննությամբ պարզվեց, որ.

7.4.1 Նախարարությունը Ծրագիր 1-ով 2020թ. ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների քանակի օպտիմալացմամբ պայմանավորված իրականացրել է թվով մեկ ուսումնական հաստատության թվի նվազեցում (22-ի փոխարեն 21-ը): Արդյունքում «Աբովյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Աբովյանի պետական բազմագործառութային քոլեջ» ՊՈԱԿ, իսկ Ծրագիր 1-ը 2020թ. ուսումնական տարվա սկզբում համալրվել է ևս երկու ուսումնական հաստատություններով՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» (թվով հիմնադրամով 33 սովորող) և «Ջերմուկի ավագ դպրոց» (թվով 10 սովորող) ՊՈԱԿ-ով՝ Նախարարության քննարկվող ծրագրի շահառուների քանակը հասցնելով 55-ի, այդ թվում՝ «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ–ում սովորում են ընդամենը թվով 4 սովորողներ:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են միայն պարզաբանումներ և բացատրություններ:

7.4.2 Նախարարությունը 2020թ–ի եկամուտները չեն հավաքագրվում որոշ դպրոցների կողմից անշարժ գույքի օգտագործման վկայականների բացակայության հիմքով սահմանված ժամկետներում հայտերը չներկայացնելու պատճառով:

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են միայն պարզաբանումներ և բացատրություններ:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Թիվ	Առաջարկություններ	*Ընդունելի է/ Ընդունելի չէ*	*Կատարված է/ Ընթացքում է*	Հիմնավորումներ
Անհամապատասխանությունների վերացման առաջարկություններին վերաբերող մասով				

1	Հսկողություն սահմանել իր ենթակայության օբյեկտների վրա գնման գործընթացների օրինականության պահպանման առումով:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 26-ի թիվ 01/17.2/5842-21 (այսուհետ՝ Գրություն) գրությամբ տեղեկացվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին կետի 1-ին ենթակետի Դ մասով ամրագրված է, որ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները հանդիսանում են պատվիրատու, իսկ Որոշման 5-րդ կետով ամրագրված է, որ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու է հանդիսանում պատվիրատուի ղեկավարը: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ ներկայումս Նախարարության համակարգում գործում է թվով 11 հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, թվով 11 աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, թվով 3 կոմիտե, թվով 5 ՓԲԸ, թվով 319 ՊՈԱԿ, թվով 15 հիմնադրամ և թվով 1 պետական հիմնարկ (ԾԻԳ)՝ Նախարարության ենթակայությամբ «օբյեկտների» գնման գործընթացների նկատմամբ հսկողություն սահմանելը (ողջ ծավալով) համարում ենք անիրատեսական, նկատի ունենալով նաև Նախարարության առկա ռեսուրսները: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Նախարարության 09.03.2021թ. «Քրոու Ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև կնքվել է ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (երեք տարվա կտրվածքվ) , որի առարկան է աուդիտորական ծառայությունների ձեռքբերումը: Նշված պայմանագրի շրջանակներում ծառայությունների մատուցողը, բացի ներքին աուդիտի օրենսդրությամբ նախատեսված գործառույթները, պետք է իրականացնի աուդիտորական առաջադրանքներ ներքին աուդիտի ենթակա միավորներում (2021թ համար դրանց թիվը 41 է), որի ընթացքում աուդիտի կենթարկվեն նաև այդ միավորների կողմից իրականացված գնման գործընթացները: Ժամետ 2021թ. տարեվերջ:

2	Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, միջոցառումներ ձեռնարկել ստեղծելու, պարբերաբար թարմացնելու և վարելու Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2–ի (ուսանողական նպաստ ստացող սովորողների, ուսանողների և անձնակազմերի գծով), Ծրագիր 4-ի (ուսանողական նպաստ ստացող ուսանողների գծով), Ծրագիր 3-ի, Ծրագիր 6-ի, Ծրագիր 7-ի և Ծրագիր 8-ի շահառուների (անձնակազմերի գծով) անհատական տվյալների առանձնացված, հերթապահ բազաներ-շտեմարաններ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Գրությամբ տեղեկացվել է, որ Նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կոմղից ստեղծվել է կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, որը իր մեջ ներառում է մի շարք ենթահամակարգեր՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչև բուհական: Ներկայումս ամբողջությամբ գործում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը: Ծրագիր 1-ը և Ծրագիր 2-ը 2021 թ. տարեսկզբից սկսել են տեղեկատվության մուտքագրումը համակարգ, իսկ սեպտեմբերից նախատեսվում է մուտքագրել նաև նախադպրոցական և բուհերի տվյալները:, իսկ 2022թ. նախատեցվում է ամբողջացնել կրթության տեղեկատվական համակարգը: Ինչ վերաբերում է, Ծրագիր 6-ի, Ծրագիր 7-ի և Ծրագիր 8-ի շահառուների (անձնակազմերի գծով) անհատական տվյալների առանձնացված, հերթապահ բազաներ-շտեմարանների ստեղծմանը, (մշակութային հաստատությունների և կազմակերպությունների կառավարման նմանատիպ համակարգի ստեղծմանը), ապա այս հարցը քննարկվել է Նախարարությունում և նախնական գնահատմամբ նման համակարգ նախագծելու, ծրագրավորելու և շահագործելու համար կպահանջվի 35-40 մլն դրամ՝ չհաշված պահանջվող սարքավորումների ձեռքբերման և համակարգի հետագա շահագործման ծախսերը: Ժամետը՝ անորոշ:
3	Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ժամկետների, ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 26-ի թիվ 01/17.2/5842-21 գրությամբ տեղեկացվել է, որ Նախարարությունը իր ֆինանսական գործունեությունը իրականացնում է «client treasury», «LSFinance» ծրագրերով, իսկ գնումների գործընթացը՝ PPCM համակարգով՝ առաջարկվում է ՀՀ հաշվեքննիչ պալատին դիմել և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստանալ համակարգերի նկատմամբ ձեռնահասույթուն ստուգել բոլոր ծրագրերը: Ժամկետը՝ անորոշ:
4	Միջոցառումներ ձեռնարկել և առաջարկություններ ներկայացնել Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար տարեկան ֆինանսավորումների համար բազային իրավական ակտեր, սահմանված նորմեր և գործակիցներ ստեղծելու ուղղությամբ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 26-ի թիվ 01/17.2/5842-21 գրությամբ տեղեկացվել է, որ Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի մասով քննարկումները շարունակվում են, առկա է մասնագետների պակաս, և Նախարարությունը ակնկալում է նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի մասնագետների աջակցությունը: Ժամկետ՝ անորոշ:

5	Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 26-ի թիվ 01/17.2/5842-21 գրությամբ տեղեկացվել է, որ առաջարկվում է դրան անդրադառնալ 2020թ. պետական բյուջեի տարեկան մուտքերի և ելքերի իրականացման կանոնակարգված հաշվեքննության ստուգման և ամփոփման ավարտից հետո: Ժամկետ՝ 2021թ, առաջին եռամսյակ:
Ընթացիկ եզրակացության այլ գրավոր տեղեկատվությանը վերաբերող մասով				
6	Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների գծով արձանագրվում են նվազումներ:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Հաշվեքննության օբյեկտն ընդունվել է ի գիտություն և այն պայմանավորվել երկրում արտակարգ և ռազմական դրության հայտարարման հետ:
7	ՀՀ հաշվեքննի պալատի 2021 թվականի հունվարի 8-ի թիվ ՀՊԵ Ա Բ 159 գրությամբ հաշվեքննության օբյեկտին ուղղված հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը պահանջվել, սակայն Նախարարության 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 01/17.2/843-21 և փետրվարի 1-ի թիվ 01/10.1/1360-21 գրություններով ստացված նյութերում առկա են չտրամադրման, ժամկետների խախտման, ոչ ամբողջական, թերի կամ ձևաչափերին ոչ համապատասխան դեպքեր:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Հաշվեքննության օբյեկտը առարկել է, ներկայացնելով՝ «Պահանջվող տեղեկատվությունը էլեկտրոնային կրիչով «Հանրակրթություն» թղթապանակի մեջ ներկայացվել է խմբի ղեկավարին» Հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է ներկայացված տեղեկատվությունը, 2020թ. փետրվարի 2-ին կազմվել է Նախարարությունից ստացված տեղեկատվության տրամադրման նյութերի վերաբերյալ արձանագրություն, ըստ որի Նախարարությունը չի ներկայացրել (1111-12004) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» և (1146-11003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» ծրագրերով պահանջվող տեղեկատվությունը:
8	Թվով 1 դպրոցի կողմից «Մեկ անձ» գնման ընթացակարգով կատարված գնումների վերաբերյալ հաշվեքննությամբ պահանջվող և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին չի տրամադրվել:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են միայն պարզաբանումներ և բացատրություններ:

9	Նախարարության գլխավոր քարտուղարի 2021թ. փետրվարի 15-ի թիվ 04/13/2461-21 գրությամբ ներկայացվել է «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախում» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի փետրվարի 6-ի թիվ 20/21 գրությունը, ըստ որի «Նվագախմբի աշխատակիցների անձնական տվյալների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին օրենքով թույլատրելի չէ, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները»:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից պարզաբանումը չի ընդունվում: 2021 թվականի փետրվարի 15-ի թիվ 04/13/2461-21 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախում» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի փետրվարի 6-ի թիվ 20/21 գրության համաձայն՝ նվագախմբի աշխատակիցների անձնական տվյալների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին օրենքով թույլատրելի չէ, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածը կարգավորում է անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցելու հետ կապված հարաբերությունները, որը տվյալ դեպքում կիրառելի չէ: Հիմնավորումները գրավոր ներկայացվել է Նախարարություն:

2020թ. հաշվեքննությունների ընթացքում արձանագրված թվով 56 անհամապատասխանություններից և այլ փաստերից թվով 27-ի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտը չի արձագանքել, այսինքն՝ ընդունվել է ի գիտություն: Նախարարությունն արձագանքել է թվով 29-ին, այդ թվում՝ ներկայացնելով թվով 22-ի մասով առարկություններ, իսկ մնացած թվով 7-ի վերաբերյալ ներկայացրել է պարզաբանումներ և բացատրություններ:

Հաշվեքննողները Նախարարության կողմից ներկայացված թվով 22 առարկություններից ընդունել են թվով 5-ը, մասամբ ընդունվել է թվով 3-ը, իսկ Նախարարության թվով 14 առարկություններ չեն ընդունվել, քանի որ ներկայացրած առարկություններն ըստ էության կրում են պարզաբանման և բացատրական համատեքստեր:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

9.1 Հսկողություն սահմանել իր ենթակայության կազմակերպությունների վրա՝ գնման գործընթացների օրինականության պահպանման առումով:

ՀՀ կառավարության «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը հաստատելու, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 701-Լ, թիվ 703-Լ և թիվ 705-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի հունիսի 1–ի թիվ 661-Լ որոշմամբ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գնումների և հաշվապահական հաշվառման վարչության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 10-ի թիվ 13-Լ ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 26-Լ հրամանով, ինչպես նաև Նախարարության կողմից կնքված պայմանագրերով հաստատված գործառույթների, պարտականությունների, նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով, առաջնորդվել վերոնշյալ ենթաօրենսդրական և իրավական ակտերով, այսինքն՝ Նախարարությունը իր ենթակայության կազմակերպությունների գնումների ամբողջական գործընթացները պարտավոր է վերահսկել:

9.2 Առկա գործիքակազմերով սահմանել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնց կիրառմամբ կբացառվեն նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական կրթության ուսանողական նպաստների տրամադրման գծով ֆինանսավորված միջոցների հանդեպ արժանահավատ, իրավասու և ճշգրիտ նպաստառուների բազաներում (շտեմարաններում), ինչպես նաև «Արվեստների ծրագիր» ծրագրերում աշխատակիցների ցանկերի անհատական տվյալների թերություններն ու անճշտությունները՝ մինչև Նախարարության կողմից կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգի ստեղծումը (2022թ. տարեվերջ):

9.3 Ուսումնասիրել, վերլուծել և վերանայել Ծրագիր 5-ի դպրոցների ֆինանսավորման շրջանակներում ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1262–Ն որոշմամբ սահմանված բանաձևում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020թ. հունվարի 31-ի թիվ 73-Ա/2 հրամանով սահմանված գործակիցների կիրառելիությանն ու արդյունավետությունը:

9.4 Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ժամկետների, ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով:

9.5 Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և

ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների ճշգրտության ապահովման վրա:

9.6 Միջոցառումներ ձեռնարկել և ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնել Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար տարեկան ֆինանսավորումների համար բազային իրավական ակտեր, սահմանված նորմեր և գործակիցներ ստեղծելու ուղղությամբ:

9.7 Ձեռնարկել այնպիսի վերահսկողական գործառույթներ, որոնց կիրառմամբ կբացառվեն Նախարարության եկամուտների կանխատեսման ուղղությամբ կրթական ծրագրեր իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների կողմից պետական տուրքի ձևով վճարվող գումարների մուտքագրման հետաձգումները՝ կապված տարբեր պատճառներով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) վկայականների բացակայության հետ:

9.8 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց: